ԹԵՄԱ 3. ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆԵՐԸ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ XIX ԴԱՐՈՒՄ

§ 27. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ XIX ԴԱՐՈՒՄ

1 Բազմակուսակցական պետություններում, եթե որևէ կուսակցություն բացարձակ մեծամասնություն չէր ստանում, ապա նման դեպքում առավել պատգամավորներ ունեցող կուսակցությունը կարող էր կոալիցիա՝ ժամանակավոր քաղաքական միություն ստեղծել պառլամենտ անցած և գաղափարապես իրեն մոտիկ մեկ կամ երկու փոքր կուսակցության հետ և, այդպիսով մեծամասնություն ստանալով, կազմել կոալիցիոն կառավարություն, որում համագործակցող կուսակցությունը մի քանի նախարարական պաշտոններ էր ստանում:

2 Հին Հռոմում պրոլետարներ էին անվանում բոլոր այն քաղաքացիներին, որոնք ոչ մի ուրիշ ունեցվածք չունեին՝ բացի իրենց զավակներից (proles – սերունդ): Այդ իմաստով՝ Մարքսը և Էնգելսը բոլոր վարձու աշխատողներին անվանեցին պրոլետարներ, քանի որ նրանք ևս ոչ մի ունեցվածք չունեին՝ բացի սեփական աշխատուժից և զավակներից:

3

Ֆրանս-պրուսական պատերազմում Ֆրանսիայի պարտությունից հետո ստեղծված Ժամանակավոր կառավարության հակազգային և հակաժողովրդական քաղաքականության դեմ 1871 թ. մարտի 18-ին Փարիզում պրոլետարական հեղափոխություն սկսվեց: Ժամանակավոր կառավարությունը փախավ Վերսալ, իսկ Փարիզում բանվորները և մանր բուրժուական հեղափոխականները հռչակեցին Փարիզի կոմունայի ստեղծումը և կազմեցին նոր կառավարություն: «Կոմունա» – լատիներեն communis՝ «ընդհանուր» բառից, միջնադարում այդպես էին անվանում ինքնակառավարվող քաղաքային համայնքները:

Փարիզի կոմունան գոյատևեց մարտի 18-ից մինչև մայիսի 28-ը: Բուրժուական կառավարման փոխարեն հաստատեց պրոլետարիատի դիկտատուրայի իշխանություն: Կոմունան և՛ օրենսդիր, և՛ գործադիր մարմին էր, բանակի փոխարեն զինված ժողովրդից կազմվեց Ազգային գվարդիա: Բոլոր գործարանները շարունակում էին աշխատել, բանվորներին վճարվում էր աշխատավարձ, մթերապահիկ, հատկացվում էին բնակարաններ: Ժամանակավոր կառավարության զորքերը մայիսի վերջին հարձակման անցան, բարիկադային ծանր մարտերում գրավեցին Փարիզը և գնդակահարեցին կոմունարներին:

Ժամանակավոր կառավարության զորքերը մայիսի վերջին հարձակման անցան, բարիկադային ծանր մարտերում գրավեցին Փարիզը և գնդակահարեցին կոմունարներին:

Հետագայում, երբ եվրոպական երկրներում ձևավորվեցին սոցիալ-դեմոկրատական կուսակցություններ, Ֆ. Էնգելսի նախաձեռնությամբ կազմակերպվեց «II Ինտերնացիոնալը», որը պետք է համակարգեր և ղեկավարեր սոցիալ-դեմոկրատական բոլոր կուսակցությունների պայքարը համաշխարհային սոցիալիստական հեղափոխություն իրականացնելու համար: